56. ԷՐԿՈՒ ԱԽՊԱՐ

Գըլլի չի ըլլի էրկու ախպար գըլլի, մեկը զանկին, մեկալը ֆուխարա։ Ֆուխարին ալուրը պարպի կը, կէրթա զանկին ախպորեն մե մաղմ ալուր գուզե կը, թե.— Ախպար, մե մաղմ ալուր տո՛ւ, ղուրպեթ էրթամ, բերեմ կուտամ կը։

Ախպարը կըսե կը թե.— Դուն տակդ փախուցեր պրծեր ես, ետև ո՞ւրտից պիտի տաս։

Ֆուխարա ախպարը տուն կէրթա, կըսե կնկանը թե.— Աղջի, ե՛լ, ավլե ամբարին քյոշաները ու մեկ էրկու հացըմ էրա, ես ֆելս փոխել եմ, ղուրպեթ պիտի էրթամ, փարա վաստկեմ։

Կնիկը կավլե ամբըրին քյոշաներն ու մե հացմ կէփե, մարթը կառնե ադ հացն ու գըյնի ճամփա։

Կէրթա՞, կէրթա հասնի կը մեշիմ, դելլե մե ծառիմ։ Քիչըմ կենա կը, կաչե օր մե առջըմ, դալըմ ու մեմա մե մուկըմ դուքան կը ադ ծառին տակ։ Ադոնք քիչըմ հանգչին կը օրա, բանը յարանության զարնեն կը առջն ու դալը ու կըսեն մկին թե.

— Հեչ ի՞նչ ունիս մուկ ախպար։

Մուկն ա կըսե թե,— Կոտովմ մեմ օսկի ունիմ աս ծառի տակը։

Գալին կըսեն թե,— Դու ի՞նչ ունիս։

Գալն ա կըսե թե.— Անտեղ մե սյուրում օշխար ունիմ, անոնց մեջը մե ղոչըմ կա, հըմը անպես մե ղոչմե, օր ինչ հիվանդ ա օր ըլլի, անոր քյալլեն ուտե, մեկե մեկ գելլե, լավնա կը։

Առջին կըսեն.— Դու ինչ ունիս։

Անա թե,— ես ան քուչին մեջ վաթցուն գյուգյում օսկի ունիմ։

Ասոնք բիտտուն մեր մարթը ծառին վրա գիմանա։ Եփ օր ադոնք կէրթան, մուկը հանե կը իրան օսկեստանքը արեգըկին ակը չորցընելու։ Ադ վախտը մարթը վար գիջնի ծառեն, զարնե մկին ոտքը կոռռե կը ու օսկեստանքը կառնե կէրթա տուն։

Ադոր էքսի օրը կէրթա սյուրիին միջեն ղոչը գողնա, գուքա կը տուն։

Սապախտանը կանչե կը թալլալին ու թանպեհ կէնե, թե՝ քընը չարսուն, ճվա ու ըսե թե.— Վեվ հիվանդ ունի թող բերե, ես լավցընեմ կը։

Ադ վախտը թագավորին աղջիկը շատ հիվանդ գըլլի։ Եփ օր թագավորը գիմանա, կանչե ադ մարթուն իրեն քովը ու կըսե կը թե,— Թեկեր աղջիկս լավցուցիր, ի՞նչ օր ուզես կուտամ կը, թե չը լավցուցիր՝ գլոխդ կռռեմ կը։

Մարթը կըսե կը թե,— Լավցնեմ կը։

Էքսի օրը ադ մարթըն է, օխտը պղինձ ջուր կը տաքցընե ու անքան կը եռցընե, օր օխտը պղինձ ջուրը մե պղինձմ դառնա կը։ Ետև ադ մարթը փերել կուտա թագավորի աղջկանը լողացնե կը ադ ջրով, պառկեցնե կը, փերե ադ ղոչին գլոխը կուտեցնե։ Երկու օր ետև ադ մարթը կէրթա կը թագավորին ղոնաղ, օր տեսնի թե հիվանդը ինչըղ է։ Թագավորը տեսնելուն պես հրամմե հրամմեով նեա տանի, նստեցնե կը, մե լավըմ պատիվ կուտա, ետև կըսե կը թե.— Դե, մուրադ ուզե մուրադ տամ։

Աս մարթը կըսե կը թե,— Իմ մուրադս քու սաղութենդ է։

Եփ օր թագավորը շատ զոռե կը, արթըղ ադ մարթը կըսե թե,— Ինձի պետք է վաթցուն դավա, վաթցուն փետատ, վաթցուն մարթ։

Թագավորը կըսե թե.— Ադ հեչ, զայդով բան ուզե, մալ, դովլաթ, փարա ուզե։

Մարթը ջուղապ կուտա թե.— Թագավորն ապրաստ կենա, ուրիշ բան չեմ ուզե։

Թագավորը հրամայե կը թե չէ, ձեռաց բիտտուն ուզածն ա կուտան կը ու ադ մարթը կէրթա քուչին միջի օսկին բերելու։ Կէրթան թե չը, մարթը կըսե թե.— Վերցուցեք ադ քուռը։

Քուռը վերցնեն կը ու տեսնին կը վաթցուն բեռ օսկի, բառնան կը դավաներուն ու փերեն կը ադ մարթուն տունը։

Էքսի օրը ադ մարթը ղոնախլըխ կէնե։ Մարթիքը կըսեն.

— Աս մարթը տունը հաց չունի ուտելու, մեզի ի՞նչըղ կը կան-

չե։ Հերնեիսա բիտտունն ա կէրթան կը։ Ասոր ախպարը թենեզիկ չի էնե ֆուխարա ախպորը տունը էրթըլու։ Ինչևիցե, գուքան զոռով-շառով տանին կը։ Նես մտնի կը թե չէ, տեսնի կը մինտրները, տան սարքն ու կարգը, զարմանա կը, կանչե կը ախպորը մե ղրաղ, խոստովանեցնե կը, թե ասքան դովլաթը ինչըղ ձեռք բերեց։

Ան ա չի պահե, բիտտուն պատմե կը։

Ասիկ օր գիմանա, ինքն ա միտքը թնե կ'օր ղուրպեթ էրթա։ Եփ օր տուն կէրթան, աս զանկին ախպարն է կըսե կնկանը թե.— Հաց էփե, ես ա ղուրպեթ պիտի էրթամ, իմ ֆուխարա ախպարս քնաց, մալի փարի տեր էղավ, ես չե՞մ ըլլի։

Էքսի օրը կէրթա կը ան մեշան ու գելլե ան ծառը, որին վրա ֆուխարա ախպարը ելեր էր։ Ադ վախտը դուքան առջը, գալը ու մուկը։

Առջը ու գալը հարցնեն կը մկին թե,— Ինչի՞ ես թթվե։

Ան ա թե.— Դուք օր գնացիք, մե մարթմ ծառեն իջավ, օսկեստանս տարավ։

Գալին կըսեն,— Դուն ինչի՞ ես թթվե։

Գալն ա կըսե կը թե,— Իմ սյուրուիս միջեն ղոչս գողցեր են։

Առջին կըսեն,— Դուն ինչի՞ ես մռութդ կախե։

Ան ա կըսե կը թե,— Իմ վաթցուն գյուգյում օսկիս են տարել։

Մեմա մուկը վեր կաշե տեսնի կ'օր ծառին վրա մարթըմ կա, իմացնե կը առջին ու գալին։ Առջը մռմռթալեն գելլե ծառը ու վար գլորե կը մարթուն, ետև վար գիջնի, իրեքը ախպար դառնան զանկին մարթուն կուտեն կը։

Ֆուխարա ախպարը գիմանա օր իրեն զանկին ախպորը ջանավարները կերել են, շատ տրորվի կը, լըլե մե կոտմ օսկի, տանի կը անոր կնկանը,— էհ,— կըսե,— ինչ էնենք, ան ա անոր ճակտին դիրն էր։ Ես իրեն ֆուխարա վախտըս աղաչեցի, պաղատեցի, օր մե քիչըմ ինձի ձեռք բռներ, չէրավ։ Ան չէրավ, հըմը ես կենա չեմ մտեհան էնե քեզի, առ աս օսկեստանը ու ասով յոլա քընը։